

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԿՐԹՐՈՆԵՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարեկան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.
Թիֆլիսում գրվում են միայն խմբագրատան մէջ.
Մեր հասցէն. Тифлисъ, Редакция «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տ է Լ է Ք Օ Ն № 253.

Ոմարդութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն).
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.
Յայտարարութիւնները համար վճարում են
իրաւաւորութեան ընդունվում 2 կոպէկ.
Տ է Լ է Ք Օ Ն № 253.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Տեղական ինքնագործութիւն.—ՆԵՐՔԻՆ ՏԵ-
ՍՈՒԹԻՒՆ. Տնտեսական գրութիւնը ինչ-
նչու. Նամակ Արարելայից. Նամակ Լոռու
գաւառից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵ-
ՍՈՒԹԻՒՆ. Նամակ Ամերիկայից. Արտաքին լու-
րեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ-
ՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Մեր հոգեւոր ուսում-
նարանների կենսաբիւ:

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Մեր բազմաթիւ յօդուածներ նուիրե-
ցինք վախճանների աղետաբեր գործու-
նէութեան հարցին. Պարզվեց, որ մեր
երկրի բոլոր անկիւններում վախճանու-
նէ հաստատ բուն է դրել և իր ցանցերով
պատել է ազգաբնակչութեան աշխատանքը
և արդիւնագործութիւնը: Մի քանի տեղ
հարստահարված ժողովուրդը փորձեց բո-
ղոք յարուցանել չարազանք ծանր կեղե-
քունների դէմ և խաղաղակեց վախճա-
նուին, բայց մեծամասնութիւնը լուռ
մնաց, տեսնելով իրան ամուր կապանքների
մէջ սղմված:

Վախճանու տուն է քանդում, սնտե-
սութիւններ է աւերում, բայց ազգաբնա-
կութիւնը անկարող է նրանից ազատվել,
որովհետեւ դրամական կարողութեան ժա-
մանակ չէ կարող նա ուրիշ ոչ որի դիմել,
քան նոյն վախճանուին, որ ունի պատ-
րաստի փող և կարող է գիւղացու հեր-
թական անհրաժեշտ կարիքի բերանը փա-
կել ժամանակակից արդիւն, թէկուզ դրանով
սկիզբ դրվի նոյն գիւղացու ապագայ թշուա-
նութիւններին և ստրկութեան:

Բողոքելով վախճանութեան դէմ՝ պէտք
է միտմանակ միջոցներ որոնել, որպէս
զի ազգաբնակչութիւնը կարող լինի չը
գիմել նրանց և իր կարիքի ժամանակ
օգտվել ուրիշ դրամական աղբիւրներից:
Իսկ երբ սրանք բացակայ են, ազգաբնա-
կութիւնը դարձնալ պէտք է գլուխ խո-
նարհ գիւղական սարսիւրի առաջ և նը-
րանց դիմել իրեն ապաստարանների: Ան-
կասկած՝ ազգաբնակչութիւնը կը թողնէ
վախճանուին, որ վերջում է 15, 20,
30 և աւելի տոկոս իր տուած գումարից,
և կը դիմէ փոխառու դրամարկղերին, ու-
րանք տալիս են պարտք 5, 6, 8 տոկոսով:
Բայց հարց է, ո՞ր են այդ դրամարկղերը,
ո՞ր է այն հաստատութիւնը, որ պէտք է
բանայ էֆան կրէզիտ:

Աւելի քան քսան և հինգ տարի է, որ
յարուցված է փոխառու խնայողական
դրամարկղերի խնդիրը մեզանում: Բայց
մինչև այժմ գործնական արդիւնքներ հա-

մարեա չը կան: Մինչդեռ այդպիսի դրամ-
արկղերի և մանր ընկերակցութիւնների
միջոցով կարելի է երկրի մէջ հաստատել
ինքնօգնութեան մի խիտ ցանց, որ կամայ-
կամաց իր ձեռքն առնի էֆան կրէզիտի
կազմակերպութիւնը և դուրս շարտի
վախճանների դատարարը:

Նոյն իսկ պետութիւնը անկարող է էա-
կան կերպով օգնել ազգաբնակչութեանը,
երբ բացակայ է տեղական կազմակերպու-
թիւնը, երբ չը կան ընկերակցութիւններ,
որոնց միջոցով կենտրոնական իշխանու-
թիւնը օգնութիւն հասցնէ էֆան կրէզի-
տի կարիք ունեցողներին: Գերմանական
կառավարութիւնը, օրինակ, բացել է ըն-
դարձակ կրէզիտ ազգաբնակչութեան հա-
մար, բայց գումարները չէ տալիս երբեք
առանձին անհատներին, այլ միայն ընկե-
րակցութիւններին: Իսկ սրանց թիւը ար-
դէն հասնում է 7454-ի, որոնց մասնակ-
ցում են 750,000 հոգի: Ընկերակցութիւ-
նը ստանալով կառավարութիւնից գումար,
ինքը իր կողմից իր պատասխանատու-
թեանը տալիս է պարտք իր անդամակից-
ներին:

Այստեղ, ինչպէս տեսնում էք, նախ և
առաջ մեծ կենսական ոյժ է ստացել տե-
ղական ինքնագործութեան ուղին, որի զար-
գացմանը նպաստում է կենտրոնական իշ-
խանութիւնը: Տեղական ինքնագործու-
թիւնը հիմնական պայմանն է գործի ա-
ջողութեան և ամրութեան:

Իսկ ո՞րտեղ է այդ ինքնագործութիւնը
մեզանում: Ո՞վ է լուրջ կերպով հոգում
նրա մասին:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՏԵՏԵՍԱԿԱՆ ԴՐՈՒԹԻՒՆԸ ԽԱՅԵՆՈՒՄ

(Նամակ Շուշու գաւառից)

Խայէն գաւառն ընկած է Շուշի քաղաքի
հիւսիս-արեւելեան կողմը և բաղկացած է մո-
տաւորապէս երեսուն մեծ և փոքր գիւղերից:
Տնտեսական գրութիւնն այդ ընդարձակ գաւա-
ռում, որի մեծագոյն մասը հայաբնակ է, չա-
փազանց ընկած վիճակի մէջ է գտնվում: Ըը-
գիտութիւնն ու չքաւորութիւնը միացած՝ կազ-
մաւորել, քայքայել են խայէնցու տնտեսա-
կան-բարոյական գրութիւնը: Այսօր խոշոր,
այսօր թշուառ և անտեսապէս ընկած ժողո-
վուրդ հազիւ թէ ուրիշ երկիրներում ճարվի:
Խայէնցուն թերեւս կարելի լինի համեմատել
Երեսնայն հազարից Բալ-Ապարան գիւղի բնա-
կիչների հետ, որոնք նոյնպէս իրանց ողորմելի
գոյութիւնը քարշ են տալիս տարիներով լոկ
ցամաք գարեհացով ու կորեկհացով... Կենսաբ-

որը տեսնելուց մարդու մազերն են փշաքաղ-
վում:

—Միթէ այդ ժողովուրդը ծոյլ է,—կը հարց-
նէ ընթերցողը:

—Մի ժողովուրդ, որ տարին տասներկու ա-
միս գործ ունի մայր-հողի հետ, որ ամբողջ
կենսաբ չօրեւում, ծմակներում, հանգիւրում է
անցկացնում, որի չարահաս սերունդը Բագուի
նաւթահորերում, իսկ մնացած մասը սարերում,
արտերում, այգիներում է կենսաբ մաշում, օրը
մշտնացնում, արին-քորինք թափում,—միթէ
կարելի է այդ ժողովուրդը ծոյլ անուանել...
Որ խայէնցին ծոյլ չէ—ապացոյց նրա ընդար-
ձակ մշակած վարելահողերն ու այգիները, ու-
րոնց նա արին-քորինք թափելով, դժուարյն
աշխատանք գործ դնելով խել է տառապիտ,
բարձրակարգ և քաղաքաւոր լինելով: Խա-
յէնցին արեւոյդ չէ, ինչպէս Նոր-Բայազէտի
գաւառում, Երեսնայն հազարում գտնվող ցո-
րենաւառ եղուարդ գիւղի բնակիչները, որոնք
իրանց տարվայ վաստակն օղտնեւում են
վատում: Սխալված չենք լինի, եթէ ասենք,
որ ամբողջ Խայէնում մի հատիկ օղտնու չը
կայ:

Խայէնցին չուայ չէ, ինչպէս այդ յատուկ է
Չանգեզուրի գաւառացիներին, որոնք Բագում
մի քանի «չանի» վաստակելով վերադառնում
են գիւղ, ոտից գլուխ զարգարած, և մի քանի
ամիս չուայ ու զեղի կենսաբ վարելուց յետոյ՝
վաստակածները վատնում, չորերը գրաւ դը-
նում և էլ ի տարի, պոկված ետ դառնում
Բագու՝ դժուարյն կենսաբ չարունակելու:

Հազուադէպ կողմից խայէնցու խնայողութիւ-
նը ժաւորութեան է հասնում: Այդ կիսամերկ
ժողովուրդը ամբողջ կենսաբ թերեւս ամուս-
նանալու ժամանակ է նոր հազուադէպ երես
տեսնում, մնացած ժամանակ խայէնցին մերկ
է, այս բառի լայն հասկացողութեամբ: Նրա
կիւնը, երկխանքը, նոյն իսկ ինքը կիսամերկ,
ոտաբոքիկ, շատ անգամ գլխաւոր հազար կար-
կատանքով պատած ցնցոտիներով են ծած-
կում իրանց մերկութիւնը: Հապա ինչ է պատ-
ճառը...

Մեր կարծիքով, խայէնցու ծայրայեղ չքա-
ւորութեան պատճառներից մէկը պէտք է որո-
նել այն թանձր խաւարի մէջ, որի անուշը
տգիտութիւն է և որի մէջ խարխալում է
Խայէնի բովանդակ գաւառում: Տգիտութիւնը
մայրն է, որից ծնվում է չքաւորութիւնը: Որ-
քան մեզ յայտնի է, նոյն իսկ այն ժամանակ,
երբ Կովկասում ծաղկած էր դարոցական կենս-
քը, երբ ամեն մի գիւղ իր բերանի պատառը
կտրում էր դարոցին տալիս, այդ ժամանակ էլ
Խայէնն աղքատ ու խեղճ էր դարոցների կող-
մից: Այս ընդարձակ գաւառում դարոցական
կրթութիւն ստացած մարդկանց մատով կարե-
լի է համարել, էլ չենք խօսում միջնակարգ
կամ բարձրագոյն կրթութիւն ստացածների մա-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԵՐ ՀՈԳԵՐՈՐ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՆԵՐԻ ԿԵՆՆ-

ՄԵՐ ՀՈԳԵՐՈՐ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՆԵՐԻ ԿԵՆՆ-
ՔԻՑ

Եւ միթէ այս չէ պատճառը, որ մեր հոգե-
ւոր ուսումնարանները մարդիկ չեն տալիս,
չեն զարգացնում և կրթում աշակերտների
միջոց ու սիրտը: Առանց լաւ տեսչի և նման
ուսուցիչների ուսումնարանում ոչ կարող է
աշակերտի միտքը զարգանալ, ոչ էլ աշակերտի
մէջ ազնիւ և բարեխիղճ ոգի կրթվի:
Գալով հայր տեսչները գործունէութեանը,
նախ պէտք է ասել, որ նրանք մի առանձին
ձգտողութիւն էին դրում՝ դէպի ճեմարանա-
ւարանները, ջանալով նրանցից գլխաւորապէս
կազմել ուսուցչական խումբը: Ճեմարանաւար-
անը, ճեմարան է, կարող է լինել կրօնի, իսկ
ստորին դասարաններում նաեւ հայոց լեզուի
ուսուցիչ, բայց միւս առարկաների համար և
բարձր դասարանների համար նրանք պատրաս-

տութիւն չունենալով մեզանում չեն հաս-
կանում մասնագէտի նշանակութիւնը և կա-
րեւորութիւնը: Կեն աշխատում մասնագէտ ու-
սուցիչներ ունենալ. կարծում են թէ, եթէ մի
մարդ միջնակարգ մի դպրոց աւարտել է, ու-
րեմն նա կարող է միջնակարգ դպրոցում բո-
լոր աւարականի ուսուցիչ լինել: Իսկ ճեմա-
րանաւարտը ո՞վ կարող է ու կարող. ճեմա-
րանաւարտին տալիս են մաթէմատիկայի դա-
սեր և այլն: Երկրորդ պահանջը, որին պիտի հա-
մապատասխանէ օրինաւոր ուսուցիչը (բացի
մասնագէտ լինելուց)—այն է, որ նա լինի կրթ-
ված, ինտելիգենտ մի անձնաւորութիւն: Որով-
հետեւ ուսուցիչը ոչ միայն սովորեցնում է,
այլ և կրթում է աշակերտին՝ ուսուցչի ազ-
դեցութիւնը աշակերտի վրա, մասնաւոր միջ-
նակարգ դպրոցում, շատ զօրեղ է: Այդպիսի
ուսուցչի վարկը բարձր կը լինի աշակերտների
աչքում և ազդեցութիւնը ազնաւոր: Այդ-
պիսի ուսուցչից կը գիտնանք պատկառանք և
սէր ներշնչել աշակերտներին և ուսուցչներին
դէպի իր անձնաւորութիւնը: Թէ չէ՝ տես-
նում ես, ինչպէս ուսուցչի մէկը, չը հասկա-
նալով, որ ինքը աշակերտի ոչ թէ հաւասար

մին: Շատ պարզ է, որ այնտեղ, որտեղ քչից—
չափից ինտելիգենտ մարդու բացակայութիւ-
նը ակնհայտ է, եւրոպական կուլտուրայի
հետքն անգամ չէ կարող լինել, գոնէ այն չա-
փով, ինչ չափով որ մուտք է գործել Կովկասի
մնացած հայաբնակ վայրերը: Գաղափարի
աշխարհից մոռացված այս խուլ անկիւնում
առաջադիմական ոչ մի քայլ չէ արված: Գիւ-
ղատնտեսական ապարէզում նախկին նախադը-
հեղեղեան կարգերն են տիրապետում: Նոյն
երկրագործական նահապետական սխառութիւն,
նոյն հին ձեւի, փիզիկական ահագին ոյժ և
ժամանակ լուրջ գործիչները, նոյն մանգաղն
ու գերանիքն, գութանն ու արօրը, կամն ու
կալը... Երկրագործական վերջին ձեւի կատա-
րելագործված մեքենաներից ու գործիչներից
միայն գութանն է, որ գործ է ածվում այս
վերջին երկու տարին և այն էլ շատ հազուա-
գիւտ տեղերում: Խայէնցին, ինչպէս ինքն է
ասում, «չօլըցի» է, «ծմակի մարդ», այդ բա-
ռերի ընդարձակ նշանակութեամբ: Նա քաղա-
քակրթութեան բարիքների մասին կամ ընա-
հասկացողութիւն չունի, կամ գիտեցածն էլ
այնքան անշնչան է, որ օգտվել չէ կարողանում
այդ բարիքներից: Բնական է, որ Խայէնը,
չորհիւ իր տգիտութեան և ոչխարային հաս-
կացողութեան մի պարարտ հող է գիւղական
«ցեցերի» համար, որոնք այնքան առատօրէն
վրձում են և թշուառ ժողովուրդի վրա ընկած՝
տղրուկի նման ծծում են գիւղացու արեւն-
քորինքով ձեռք բերած հալալ աշխատանքը...

Պարբերաբար կրկնվող անբերրութիւնը,
կարկուտը, մորեխը և կամ մի ուրիշ պատու-
հաս մղում են խեղճ գիւղացուն դէպի անբա-
րեւիղճ վախճանու գիւղը, որը վամպիրի նը-
ման արնաքան է անուշ գիւղացուն, առատապե-
լական տոկոսներ վերցնելով, չարունակ պար-
տական թողնելով նրան, որից ամեն դէպքում
գիւղն օգտվի, գերի դարձնել իրան: Մենք ա-
ռալ կը բերենք մի քանի փաստային օրինակ-
ներ, որոնցից ընթերցողը կարող է որոշ գաղա-
փար կազմել այդ ցեղեկվայ աւազակների ար-
չաւանքի մասին, որոնք օրը ցերեկով, յայտնի
կերպով, կողոպտում են բարբառաբար իրանց
թշուառ զօնին սրբագործված միջոցներով և
որոնց ցանցերում կաշկանդվել է մի ամբողջ
անտէր ժողովուրդ, ժողովուրդ՝ որի ամբողջ
տարվայ աշխատանքի մեծ մասը կուլ է գնում
վախճանու անպատակ որկորը և որ դարձնալ
միւս է նրան պարտական:

Դըլաղ գիւղացի Էփին հինգ ռուբլի պարտք
է վերցնում նոյն գիւղացի Աւան Տէր-Յովնան-
նիսեանից: Մի քանի ամիսից յետոյ, Էփին
վճարում է Աւանին 2 ռ. փող, 4 պուլճ ածուխ՝
պուլճը 50 կ., 2 օր խոտ՝ 2 օր էլ ցորեն է հըն-
ձում Աւանի համար, օրական 1 ռուբլի վար-
ձով: 2 օր էլ թուփ է թափ տալիս, 1 ռ. 25
կօպ. օրավարձով: Ուրեմն, ընդամենը ինչը

ըր ունեցած ձգտողութեան պատճառներից մէկն
էլ այն է, որ ուսուցչիներ և վերակացունք
ընտրելիս տեսուչը նախ ի նկատի է ունենում,
թէ արդեօք ապագայ վերակացուն կամ ուսու-
ցիչը պատրաստ է իրան, տեսչին, ծառայելու
և հնազանդ լինելու, և ապա սկսում է մտածել
նրա զուտ ուսուցչական և վերակացունական
արժանիքների մասին:
Դառնալով Էփինանի ճեմարանին, պէտք է
ասենք, որ այդ բարձրագոյն ուսումնարանի
հայր տեսուչը մի տարի տեսչութեան ընթաց-
քում ապացուցել է իր թէ վարչական անըն-
դունակութիւնը և թէ եռանդը ու գործու-
նէութեան պակասը վերակացութեանը: Նրան յանձնված
ուսումնարանը անկարգ վիճակի մէջ է եղել
թէ ուսումնական և թէ տնտեսական կողմից:
Ցուցականի, արտաքինի ետեւից ընկնելով,
ուսումնարանի ներքին վիճակը մոռացութեան
է եղել տուած: Դրանով ջրհոր փորելը, ճեմա-
րանի կից պարտէզ տնկելը, պիւլիքների մաս-
նակցելը՝ աւելի էին հետաքրքրում նրան: Գրա-
դարանը խառն: Տնտեսականի անկարգութեան
պատճառով աշակերտների պէտքերը վատ էին
հոգացվում, մեծ պատի ժամանակ պատվայ ու-

ամսվայ ընթացքում էփին վճարում է Աւս-
նին 2 ր. + 2 ր. + 4 ր. + 2 ր. 50 կ. = 10 ր.
50 կոպ. Այդ բոլորից յետոյ էլի խեղճ էփին
մուրհակով մնում է պարտ Աւանին հինգ րուբ-
լի 50 կոպ. Փակագծի մէջ պահմ, որ նոյն այդ
Աւանն է, որ համախառնակումով մտադիր է քա-
հանայ ձանադրվելու, որի վրա դարձնում ենք
հոգեւոր կառավարութեան ուշադրութիւնը:

Դըշաղ գիւղացի Գրգըլ-Էմիրը մի հատ եղ
է աւնում Սէյրի-Շէյնայի զարգեալ Իսայուցի:
Վերջինս եղբ քանահաւում է 25 ր., 10 ր. էլ
տոկոս հաշիւով 35 ր. մուրհակ է ստանում
էմիրին: Անցնում է տարին. էմիրը վճարում է
25 րուբլին: Հետեւեալ երեք տարին մնացորդ
10 ր. մեծանում է եւ դառնում 55 ր.: Դրա փո-
խարէն էմիրը համ վերադարձնում է մի եւ նոյն
եղբ, համ 15 րուբլի փող, համ էլ 15 րուբլու
մուրհակ է տալիս:

Դըշաղ գիւղացի Հայրապետը համագիւղացի
դալլաք-Մուրեց պարտք է վերցնում 10 ր.
մէկ տարի ժամանակով: Տարին բոլորում է.
դալլաք-Մաքին գալիս է Հայրապետից իր փո-
ղի տոկոսը մի ջլով ցորեն ստանում, որ մո-
տաւորապէս արժէ 8—9 րուբլի: Եւ այսպէս
չարունակ մի քանի տարի տաւոր բուրլուն
8—9 ր. տոկոս վճարելով վերջը հաղթ կարո-
ղանում է մէկ ջլով ցորեն ծախելով իր 10 ր.
պարտքը վճարել եւ դալլաք-վախառուի ճի-
րաններէն իր հոգին ազատել:

Ես վերցրի ինչէն մի գիւղը միայն. կարելի
էր անկերվ չարունակել վախառուների ճեա-
ջագործութիւնները, սակայն բաւականանալը
մեր օրինակներով եւ վերջապէս դնելը այստեղ:

Աւերդը է առի, որ վախառուութիւնը մի
խոշոր, սպառնալից պատուհան է, մի սոսկալի
չարիք, որ արնաքամ է անում մի ամբողջ գա-
ւառ եւ որի դէմ պէտք է կուել արմատական
միջոցներով: Օրէնքը, դատարանը անգոր են
ներկայ դէպքում արմատախիլ անելու հասա-
րակական այդ մեծ չարիքը, որ իր սուր մա-
գիւնները շատ խորն է մխել հասարակութեան
կազմուածքի մէջ:

Ամիսփոխը մեր առածները—Ուաչէնցին տը-
գետ է, կիսամալարեն եւ խաւար: Ուաչէնցին
չքաւոր է, տնտեսապէս քայքայված եւ կազ-
մալուծված: Ուաչէնցին կաշկարւում է վախա-
ռուների արնաքամ անող ճիւղներում... Ան-
տարակոյս անհրաժեշտ է օր առաջ օգնութեան
հասնել խաչէնցուն, որպէս զի նա կարողանայ
բարոյապէս կաղցրութիւն, ոտքի կանգնել
եւ իր չարն ու բարին հասկանալ: Սակայն
ո՞վ պէտք է իր վրա վերցնէ այդ խնդիրտիլը,
մի ամբողջ ժողովրդի բարոյական վերածնու-
թեան այդ սրբազան գործը: Մեր կարծիքով,
բարոյական մեծ պարտականութիւն կայ Բագ-
ւում ապրող այն դարաբաղցիների վրա, որոնք
ամեն յարմարութիւն ունեն այդ գործի նախա-
ձեռնողներ հանդիսանալու: Նրանց ենք դի-
մում, որոնք թէ ներթափան եւ թէ մոտաւոր
կարողութիւն ունեն Ուաչէնցի նման խաւար
անկիւններում լոյս բարեբար ճառագայթները
թափանցել տալու: Դուք, դարաբաղցի միլիո-
նատէրեր, դուք բարոյապէս պարտական էք
օգնութեան ձեռք կարկառելու ձեր թշուառ
հայրենիքում մնացած տղէտ, լոյսից դուրի կը-
բայրներին, որոնք իրանց ողորմելի գոյութիւ-
նը սղոցում են իրանց խղճով լեռներում, եւ
դուռնների ոյծով մի կտոր ցամաք հաց են
խլում ժլատ ընտելութիւնը բազմադարձ ընտա-
նիքը օտլի ճանկերից ազատելու: Էլաւ է ուշ
քան երբեք:

Ս. Օհանջանեան

ՆԱՄԱԿ ԱՍԿԱՔԱՆԱԿԻՑ

Յուլիսի 27-ին

Ամառս Ախալքալաքի գաւառապետ պ. Զի-
սերման, ժողովրդի հետ մտակ ծանօթանալու
համար, չընց գաւառի գիւղերից շատերը, ուր
գիւղացու ցան ու դարդը տեղն ու տեղը
տեսնելուց յետոյ, երկար խօսում էր ու խրա-
տում, թէ ինչ պիտի անէ գիւղացին այդ ցա-
ւերն ու դարդերը դարմանելու համար:

Գանձա գիւղում ներկայացաւ նրան գիւղա-
ցիների մի ստուար բազմութիւն, որ քան-
գիտովեց, թէ հարուստները գիւղացիներին
խեղճում են, խլում են աղքատ ընտանիքի բե-
րանից վերջին պատառը: Գանձաաւորները
յայտնեցին, թէ չը նայելով որ գիւղը հող չա-
տուի, բայց «աղաները» այդ հողը գրեթէ սե-
փականացրել են ամբողջապէս ու ինքնակա-
մքէֆներն ուղածի չափ վարկուց ու դանե-
լուց յետոյ՝ այնքան ոչխար են պահում, որ
գիւղի անագին արօտով չը բաւականանալով
աղքատների արտերն ու չայիրներն էլ չեն խը-
նայում: Պ. գաւառապետը մի երկար ճառով
նայա յայտնեց, որ պիտի իրաւունք չունի
գիւղի ներքին հասարակական գործերի մէջ
խառնուելու, որոնք հասարակական ժողովների
պարտականութիւնն էր պիտի կազմէին, ապա մանրա-
ման պարզաբանեց այդ ժողովների նշանակու-
թիւնը: Ի միջի այլոց, նա բացատրեց, որ հա-
սարակական ժողովների ու գործերի մէջ թէ
յետին աղքատ, հայի կարօտ գիւղացին եւ
թէ հարուստ աղան ու հարուստ իրաւունք ու
ձայն ունեն, ուստի հարկ ստանալից կրէք չը
պիտի քաշվին աղքատներն ու լուծեալները
տանն նրանց հարստահարութիւնները: Ամեն
մի բարեկարգութիւն, որ պէտք է ընդհանուր
կամ մեծամասնութեան բարեկեցութեան հա-
մար, ընդունվում է հասարակական ժողովում
ձայնների մեծամասնութեամբ կազմված: Համա-
խառնակումով, ինի նա առաջարկված յետին աղ-
քատի, թէ ամենահարուստի կողմից Ուստի հա-
սարակական ժողովում գիւղացիները կարող են,
համախառնական վճռով չափաւորելով հարուստնե-
րի անասնապահութիւնը, նշանակած թւից աւել
պահածները համար վարձ դրահանջել: Կամ
ստիպել, որ գիւղի արօտից դուրս հանեն: Ա-
պա կանխելով գիւղի հարուստներին, պ. գաւա-
ռապետը խրատեց, որ քրիստոնէային վայել չէ
ընկերոջ հարստահարել, մի բան, որ օրէնքն էլ
է դատաւարտում: հարուստները պարտական
են ձեռքերից եկածի չափ օգնել իրանց հա-
մայնքի աղքատ անդամներին: ամեն մարդ
պարտաւոր է իր ճակատի արդար քրտինքով
ապրել եւ ոչ ուրիշի դժբաղդութեան վրա
հիմնել իր հարստութեան քանակը: Թորոքեց,
որ ամեն ոք աչքի առաջ ունենայ ընդհանուրի
չար եւ միայն իր անձնականի վրա չը մտածէ:

Սաթիս գիւղում, որ հաւաքված էին այդ
հասարակութեան բոլոր գիւղերի ամեն անից
մի մի մարդ, պ. գաւառապետը դարձեալ ման-
րաման խօսելով հասարակական ժողովների
մասին, բացատրեց գիւղական պաշտօնականի
եւ այլ ընտանիքների լուրջ նշանակութիւնը
գիւղական կեանքում: Օրինակ բերելով, թէ
ինչ կը լինի հօտի դրութեանը, եթէ հողին էլ
ոչխարների չափվածք լինի եւ ցոյց տալով տը-
գետ ու կաշկարւակեր պաշտօնականների վնասա-
կարութիւնը, նա յորդորեց հասարակական
պաշտօնականների ընտրութիւններին մեծ գո-
չութեամբ ու լրջութեամբ վերաբերվել եւ աշ-
խատել ընտրել դարգացած, բարեխիղճ մարդ-
եր:

Իսկ միայն մի առարկայից թոյլ աշակերտներէն
մի քանիսը արձակվել են: Ասում են, թէ այդ
պատահել է մաքսմը հայր տեսչի ճնշման շը-
նորհիւ: տեսնույր պաշտօնային է հանդիսացել իր
հայրենակիցներին եւ թշնամի իր չը սիրածնե-
րին...
Յունվարին ձեռնարանում տեսչի օգնական է
նշանակվում: ոչ ոքի համար գաղափար չէր: որ
դրա պատճառը այն չէր, որ ձեռնարանի տեսչին
օգնական էր պէտք, այլ այն, որ տեսչի օգնա-
կան նշանակվողին ոտնիկ էր հարկաւոր: Նմա-
նապէս բոլորին լաւ պարզ էր: ամայն, որ ի-
րան օգնական ընտրելիս հայր տեսնույր ի նկա-
տի է ունեցել ոչ թէ ձեռնարանի օգուտը, այլ
իր անձնական բարեկամական եւ «խնամիտ-
կան» հաշիւները: Բայց եւ այնպէս, եթէ տեսչի
օգնականը պարտաճանաչ մի մարդ լինէր, նա
անկու բան կը գտնէր ձեռնարանում: Եւ իդոք
չէր ստանայ իր ոտնիկը: Սակայն դժբաղդաբար
այդպէս չեղած եւ հայր տեսչի պարսն օգնա-
կանը աւելի որոտորութեամբ է հետաքրքրվել
եղել, քան ձեռնարանով:

ձեռնարանում շատ եւ շատ բան կայ որ կա-
րօն է արմատական եւ հիմնական բարեկար-

կանց, մանաւանդ մեծ ուշադրութիւն դարձնել
գիւղական գրագիրների քնտրութեան վրա, ո-
րոնց ձեռքին են հասարակութեան բոլոր գոր-
ծերը ու մի քանի բուրլի պակաս ոտնիկ տալու
համար անտես չանել նրանց բարոյական յա-
կութիւնները: Այդ բոլոր պաշտօնականների հա-
մար անհրաժեշտ է իւրաքանչիւր հասարակու-
թեան ունենալ մի պատշաճաւոր շինութիւն,
ուր գեղեղվի գիւղական դատարանը:

Հասարակութիւնն այդ մասին տուել էր ար-
դէն իր համաձայնութիւնը համախառնական
վճռով: Ապա դառնալով գիւղական պաշտօ-
նականներին, նա ասաց, որ թէ պետական օրէն-
քը եւ թէ ինքը կարող են թերեւս ներողա-
մտութեամբ վերաբերվել նրանց սոցիալութիւ-
նից առաջ եկած սխալներին, բայց երբեք չեն
կարող համբերել կաշառակերութեան, որին
խիստ հետամուտ են թէ օրէնքը եւ թէ ինքն
ստանձնապէս:

Չը նայելով Ախալքալաքի գաւառի յայտնի
հարուստ աթիլայի Յ. ի. Թախանձանին, պ.
գաւառապետը չուզեց ինչեանել նրա տանը, ոչ
էլ ընդունել նրա պատրաստած փարթաւ ճա-
շը: Գիւղական դատարանի անյարմարութեան
պատճառով՝ նա իջաւ գիւղի ծայրում, ծա-
ւերի տակ ու բաւական համարելով իր
ճանապարհորդական պայտասից հանած մի
կտոր չոր հայն ու երկու ձուռ, բացատրեց
թէ այն պատճառով չէ ինչեանում այդպիսի
պարտների տեսնում, որպէս զի չը կարծէին,
թէ այդ պարտները մի առանձին առաւելութիւն
ունեն հասարակութեան մէջ ու նրանք իրանց
ապօրինի պահանջներով չը հարստահարեն խեղճ
ժողովուրդը: Ներողութիւն խնդրելով ինչեալ
պարտից, որ չը կարծէ թէ իր խօսքն առանձ-
նապէս նրա մասին է, պ. գաւառապետը աւե-
լայրեց, որ չապ անգամ այդ իբր պարզ, ան-
կեղծ հիւրասիրութիւնը գիւղին անագին ծախ-
ված է պատճառում: Եւ յիշաւ, ներկայ եղող
պարտներից մինը ի դէպ պատճեց, որ նախ-
կին գաւառապետներից մինի ճաշը Հեղտի գիւ-
ղում հարիւր ու քանի բուրլի էին հաշիւ հաս-
րակութեան վրա, որովհետեւ ճաշին պորձա-
ված միայն աղը հաշիւ էին 1 րուբլի 20 կոպ:

Գաւառապետ պ. Զիսերմանի թէ վարմունքը
եւ թէ խօսածները բոլորովին նորութիւններ
էին մեր ժողովրդի համար: «Որ ունի ակա՞նջ
լսելի լուրիք?»

Չաւախեցի

ՆԱՄԱԿ ԼՕՌՈՒՆ ԳԱՆԱՌԻՑ

Հայրաբէկ գիւղ, յուլիսի 26-ին
Յուլիսը մեզ համար կատարեալ պատիժ
դարձաւ: 12-ին սուգ էր պատել մեր գիւղը. կար-
կուտը եւ յորդառատ անձրեւը վաղցրել էին
գիւղի ցանքները եւ կանաչ լոտուս փեղք գիւ-
ղային դեռ չը գիտէր, թէ էլ ինչ է պատել իր
գիւղերը: Երկու օր յետոյ տեղի ունեցաւ սոս-
կալի յորդառատ անձրեւ: առաջացաւ մեծ հեղեղ,
որի նմանը ծերերը չեն յիշում: Հեղեղը քեց
տարաւ արտերի մի մասը, որ ազատ էր մնա-
ցել կարկուտից: տարաւ գարեց անասուններ,
փչացրեց գիւղացիներին: տանալը ճանա-
պարհը:

Յուլիսի 17-ին կրկին չարագուշակ անպիւր
եկան պատեցին ամբողջ Լոռին: Վիճակը այս
անգամ միայն Հայրաբէկին չէր ընկել, այլ եւ
չընկալ գիւղերին: Կաղին չափ կարկուտը
տեսեց մի քանի բուրլ եւ տափակացրեց կա-
նաչ արտերը, դրա հետ եւ գիւղացու սիրտը:

Գութեան: ձեռնարանը մեղմում մի խորթ օր-
դու բաղդ է ունեցել մինչեւ օրս: մանաւանդ
եթէ համեմատելիս ինքնը ներքինեան դպրոցի
հետ: Ոչ առատ կապակներ, ոչ առաջադաս
հետաքրքրութեան եւ համակրութեան պատ-
կայնա չէ եղել մեր հասարակութեան մէջ:
Արեւոք այն է այս բանի պատճառը, որ Գիւղը
կաթողիկոսը չէր վայելում այն հեղինակութիւ-
նը եւ չէր ներշնչում այն հրապույտը, որ միշտ
չընթացում էին ներքին կաթողիկոսին: Սրա-
նից 25 տարի առաջ Գիւղը կաթողիկոսի ձեռ-
նը բայց այդ ձեռնարանի մարմնաւոր ծնունդն
էր: Ժամանակ է, որ ձեռնարանը այժմ հոգեւոր
ծնունդ եւս ստանայ: Իրա համար հարկաւոր
է մի նախապիւի, եթէ ոչ աւելի եւս հեղինակ-
ւոր ձեռք, որ կարողանայ այդ վերածնութեան
պատճառը լինել: Այդ մեծագործ անձնաւորու-
թիւնը կենտրոնացնելով իր մէջ մեծ գործի
ընդհանուր ուղղութիւնը, թող կազմէ յառաջ
յանձնաժողովներ: ձեռնարանի ծրագրեր վերա-
քննելու համար, անտեսականը կարգի բերելու
կանոնաւորելու, որոշ ու անխախտ հիմքերի
վրա դնելու: եւ միջոցների մասին հոգալու:

Գիւղացիները գտնելով, որ այս բոլոր աղէտնե-
րը լինում են իրանց մեղքերի համար, ընդհա-
նուր համաձայնութեամբ որոշեցին մատաղ ա-
նեւ եւ խնդրել, որ Աստուած իրանց եւ իրանց
երեսներին խնայէ: Հետեւեալ օրը պատարազ
մատուցին եկեղեցում եւ բաժանեցին մատաղը
Բայց այս անգամ էլ չը լսեց Աստուած: Յուլի-
սի 21-ին, փափ 5-ին, հետուից քամու եւ հե-
ղեղի ձայնից գիւղացիներին հասկանալի եղաւ,
որ գիւղի սանձանում կարկուտ է գալիս: Իս-
կոյն, մի բուրլի մէջ, գիւղացիներից մի քանի-
սը դէպի եկեղեցին վաղեցին տէրտէրի հետ եւ
սկսեցին զանգակները հնչեցնել, մի քանիսը
Նարեկը ձուքը առած դէպի երկինքը աղօթել,
իսկ ամբողջ մի տեղ խմբված, ձեռքերը ծալած
սկսեց ներողութիւն խնդրել երկինքից, որ ի-
րանց խղճայ եւ բաւական համարէ հասցրած
վնասը: Իդոք էր. կարկուտը գալիս էր շատ
հետուից, աւերածութիւններ անելով, եւ իսկա-
պէս այս անգամ կատարեալապէս վերջացրեց թէ
գիւղացու եւ թէ նրա անասունների ուտելիքը
էլ ինչ անէ գիւղացին, ում գիւղէ, նա չուտել
է, հաց է հարկաւոր եւ ուրիշ շատ պէտքեր
ունի: նա էլ ի Աստուծո՜ւ փէշին է բռնել եւ
նրանից է խնդրում իր փրկութիւնը: Այս սոս-
կալի աղէտը տեսնելու եւ վնասները գնահա-
տելու համար եկաւ Ջալալ Օղլու պրիստուր,
առաջին վնասը հաշւած է 10,000, իսկ մնա-
ցածները դեռ չեն հաշւած: Վնասված են վո-
րօնյօվա, Պրիվոյնի, Ուստու՜ւ եւ այլ շատ
գիւղեր, որոնց վնասը ճիշդ հաշւած չէ, բայց
շատ մեծ է: Անձրեւները մինչեւ օրս դեռ չեն
դադարել:

Գիւղում երեւացել է անասունների հիւան-
դութիւն, որի մասին եւ յայտնված է կառա-
վարութեան: Անասնաբույժը արդէն հարեւան
գիւղերը շրջում է հիւանդութեան առաջն առ-
նելու համար: Ինչպէս պատմում են, հիւան-
դութիւնը մեծ վնաս է պատճառել կաթնատըն-
տես պ. Շարիֆեանին, կոտորելով նրա կովերը:

Ս. Գաւառեցի

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԻՆ՝

Ներքին գործերի մինիստրութիւնը վճռողա-
բար հրաժարվեց զինամուլոյի հաստատութիւն-
ներ մայրնիւս մարզի ոչ միայն հիւսիս-արեւ-
մուտեան, այլ եւ հարաւ-արեւմտեան նահանգ-
ներում: Այդ հաստատութիւնների արդէն ծախ-
ված նախագծի փոխանակ՝ պէտք է մշակվի
այժմ գոյութիւն ունեցող տեղական այն հաս-
տատութիւնները բարեկաւուր հարցը, որոնց
յանձնված է համայնական գործերի զինավա-
րութիւնը: Նախկին դրութեան մէջ է լինելը
ված նաեւ շատ քաղաքներում ինքնավարու-
թիւն մտցնելու հարցը, որտեղ քաղաքային
գործերը կառավարում է ոստիկանութիւնը:

«Русскія Вѣдомости» լրագիրը հաղորդում է,
թէ Անդրկովկասում հայտարար դատաւորների
եւ հայապարս միջորդների տեղ շահագործող
НАЧАЛЬНИКЪ-ների պաշտօն մայրնիւս ծրագիրը
որ ներկայացրված էր բարձրագոյն վարչական
չընթաներին, հաւանութիւն չէ գտել:

Առաջիկայ սեպտեմբերին կը բացվի նոր
միջնակարգ գիւղատնտեսական դպրոց: Սա մա-
րա քաղաքում: Դաւրթապքը կը լինի վեցա-
մասն: Առաջին դասարանը կընդունվին 14—16
տարեկան հասակի տղաներ, որոնք վերջացրել

համար, գրադարանը ճիւղացնելու, կարգի բե-
րելու, գրադարան կազմելու եւ տպագրելու
համար, ձեռնարանի այժմեան անյարմար, նե-
ղուածք եւ աշակերտների առողջութեան վը-
նասող չէնքի փոխարէն մի նորը եւ յարմար
կառուցանելու համար:
ձեռնարանի հիմնադիրը մեծ գործ կատարեց
նրան է պարտական ձեռնարանը իր ծնունդը
Բայց մի հին առած առում էլ թէ երեկուս ծը-
նելը դժուար չէ, դժուար է հերթափոխել մարդ
գործները: Չէ կարելի եւ չը պէտք է ուշադրաւ
որ ձեռնարանի հիմքը դնելը ոչ փոքր բան էր
եւ ոչ էլ հեշտ բան: Ապա ուրիշն որքան աւե-
լի դժուար է այժմ այդ հիմնադրութեանը տալ
իր անունին եւ կոչմանը: արժանի եւ համարա-
պատասխան հերթափոխելը: Այժմ, երբ ձեռնարանը
բոլորած լինելով իր գոյութեան 25-ամեակը,
անցել է հերթափոխութեան չընթանից: Գիւղի
կատարեալ հաստատութեան չընթանը, հարկաւոր
է առանց ժամանակի կորցնելու առաջ տանել
նրա վերածնութեան գործը: Ապա թէ ոչ տա-
րիքը կաւեւանան, իսկ ձեռնարանը կը մնայ
նոյն տնտես եւ անբաւարար վիճակի մէջ:
Ս. Ա.

Նախագահութեան Երբ քարոզիչները ցանկութեան յայտնեցին զնալ Շահաբադ, Տուան-Շահաբադ տունը նրանց բազմաթիւ կողմերէր, եւ իմանալով, որ հարեւան Նախագահի նշանակման հարցը պատճառ է վերաբերում զէպի օտարազգիները, հրամայեց կողմերէն ուղեկցել քարոզիչներին եւ այդ Նախագահութեան ամեն հարց գործ դնելով պաշտպանելու նրանց, եթէ չկանգնեն կողմից որ եւ է վտանգ սպառնայ օտարազգիներին:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՅ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

7 օգոստոսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ Հրատարակված է Բարձրագոյն հրաման, որով արդիւլում է արտահանել զէպի Չինաստան զէպ, ուսմը եւ վառօր:

Գնեւրալ Օրով օգոստոսի 1-ին եւակլի մօտ յաղթեց 7000 մարդուց բազմաթիւ չինական զօրքին:

ՀՕՆԳԿՕՆԳԻ Գուան Նախագի մանդարինները լուրջ կերպով հոգում են օտարազգիների մասին: Հրատարակված է մի յայտարարագիր, որի մէջ ասված է, թէ հիւսիսում կարգի խանգարումը վատթարացրին մի քանի բարձրագոյն պետական գործիչներ, որոնք կապված էին ԱՄԷՌ-Բուսնիցի հետ, եւ թէ Պեկինի գըրաւումը պէտք է նկատել իբրեւ արդար հատուցում: Ապա մանդարինները յայտնում են, թէ միայնակ զօրքերի գործը կարգի վերահաստատելն է եւ թէ նրանց գործունէութիւնը պէտք է սահմանափակվի հիւսիսում: Որոշուած պատուիրով է ազգաբնակչութեանը խուսափել ապստամբական շարժումներից եւ պաշտպանել օտարազգիներին:

ՇԱՆԳՀԱՅԻ Նախկին փոխարքան, իմանալով որ նրա չըբարեկան հրամանը, որով պահանջվում էր յարգանքով վերաբերվել կայսրուհուն եւ կայսերական ընտանիքին, բացատրելով է որպէս սպանակից, դիմել է այժմ անգլիական հիւպատոսին մի հետաքրքիր, որի մէջ բողոքում է այդ տեսակ բացատրութեան զէպ եւ յայտնում է, որ այսուհետեւ եւս կը պահպանէ կարգը Շանցիի Նախագիներում եւ կը հետեւի խաղաղ քաղաքականութեան: Պաշտօնական աղբիւրից ստացված տեղեկութիւններին նայելով՝ Լիպինսկին, որ վերադարձւած էր յուլիսի 28-ի կուռում, յուլիսի 30-ին մեռաւ: Անգլիական զօրքերի ամի իջնելը ամենեւին յուզումն չէ առաջացնում ընդհանրի մէջ, ապի իշխողութեան փրանսիական զօրքաբաժինը բաղկացած է 100 հոգուց: Ինչպէս լսվում է, Տեանձին կուղարկվի մի չըրջանաւ, որ կընդունէ Պեկինում ազատածներին:

ՉԻՖՈՒՆ օգոստոսի 7-ին: Միացած զօրքերը հրակոծում են կայսերական ամրացրած պաշարը, կայսրուհին իբր թէ գտնվում է անտեղ: ԲԻՐԻՍՍԵԼԻ Պնդում են, թէ Դէլիասէ մտադիր է առաջարկել միջազգային կօնֆերենցիա հրաւիրել Պարիզում՝ համաձայնութիւն կայացնելու համար այն պետութիւնների զինուորական եւ դիւանագիտական քաղաքական վերաբերմամբ, որոնք մասնակցում են չինական հարցին:

Օգոստոսի 8-ին

ՊԱՐԻԶ: Այն լուրը, թէ Դէլիասէ մտադիր է առաջարկել կօնֆերենցիա հրաւիրել Պարիզում՝ պետութիւնների զինուորական եւ դիւանագիտական գործողութիւնների մէջ միութիւն պահպանելու համար Չինաստանում՝ հերքվում է:

ՎԱՇԻՆԳՏՕՆ: Այստեղի եւապօնական դեսպանատունը հետագիւր ստացաւ Տօկիօյից, օգոստոսի 6-ից, թէ միացյալ զօրքերի Պեկին մուտք գործելուց յետոյ՝ չինական զօրքերը Նախագիներ զէպի կայսերական պալատը եւ այնտեղ էլ մնացին, եւապօնական զօրքաբաժին յանձնարարվեց հանել կայսերական պալատի վրա: Այդ զօրքաբաժինը զօրեղ զինագործիւն հանդիպեց չինական զօրքի կողմից, կռիւը դեռ եւս շարունակվում է: Եւապօնական զօրքի գըրաւումը ընկալարանը եւապօնական դեսպանատանը է: Եւապօնական զինվորիկան տեղաւորված է գիւղերում, Անդին-Մին դռնից դուրս:

ՇԱՆԳՀԱՅԻ: Չինական պաշտօնական աղբիւրից ստացված տեղեկութիւններով՝ գլխավորված են էլի երեք բարձրագոյն մանդարիններ՝ քաղաքացիական վարչութեան Նախագահ Սա-ուդուն, կայսերական պալատի մինիստր Լիզ-ժուն եւ ցզուգ-լի-համէնի անդամ Ինչիան, առաջին երկուսը թշնամի էին օտարազգիներին, իսկ երրորդը, ընդհակառակը, բարեկամ էր: Գնեւրալ իւն-Լու գերի է առնված Չինգից: Կայսրը եւ կայսրուհին գտնվում են պրինց Տուանի հակողութեան տակ, Պեկինից 60 մղոն:

Զէպի արեւմուտը: Լի-Սուեդ-Չանգ անյապաղ մեկնում է զէպի հիւսիս:

ՊԱՐԻԶ: Իշխան Տեռիշելին շնորհված է պատուաւոր լեգէճօն «Փիլիսոփայական մեծ խաչ», իսկ Վուիշին՝ կօմանդօրի խաչ:

ԽՈՐԱԳԻՐ՝ ԱԼԷԳՍԱՆԴՐ ԲԱՆԱԹԱՐ Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻԻ-ԱՂԱՄԱՆԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՂԻ (Ժամերը Պետերբուրգի հաշով) տարբերութիւնը 58 րոպէ:

№ 5 գնացքը: № 3 գնացքը:
Բաղրից դուրս է գալիս ցեր. 4 ժ. 1 ր. ցեր. 11 ժ. 29 ր.
Թիֆլիս է հասնում առ. 8 ժ. 53 ր. ցեր. 5 ժ. 34 ր.
Թիֆլիսից դուրս է գալիս ց. 9 ժ. 32 ր. ցեր. 6 ժ. 34 ր.
Բաթում է հասնում ցեր. 9 ժ. 1 ր. առ. 7 ժ. 14 ր.

№ 6 գնացքը: № 4 գնացքը:
Բաթումից դուրս է գալիս առ. 7 ժ. 50 ր. ցեր. 7 ժ. 59 ր.
Թիֆլիս է հասնում ցեր. 7 ժ. 15 ր. առ. 8 ժ. 42 ր.
Թիֆլիսից դուրս է գալիս ց. 7 ժ. 18 ր. ց. 10 ժ. 05 ր.
Բաղու է հասնում ցեր. 12 ժ. 10 ր. ց. 5 ժ. 16 ր.

արագ գնացք
Թիֆլիսից դուրս է գալիս ցեր. 11 ժ. 19 ր.
Բաթում է հասնում ց. 9 ժ. 5 ր. ցեր. 9 ժ. 41 ր.
Բաթումից դուրս է գալիս ց. 11 ժ. 18 ր.
Թիֆլիս է հասնում ց. 9 ժ. 30 ր.

Թիֆլիսից զէպի Կարս դուրս է գալիս ցեր. 9 ժ. 46 ր.
Ալեքսանդրօպոլ հասնում է ց. 7 ժ. 7 ր. ց. 46 ր.
Կարս հասնում է ց. 12 ժ. 56 ր.
Կարսից դուրս է գալիս ց. 3 ժ. 39 ր.
Ալեքսանդրօպոլից դուրս է գալիս ցեր. 8 ժ. 25 ր.
Թիֆլիս հասնում է ց. 7 ժ. 15 ր.

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՌՈՐ ՀԻՄՆԻՄԱՆՈՑ

Բ. ՆԱԽԱՍԱՐԳԵԱՆԻ

(կուլիա, վարձուցովի արձանի հանդէպ)

ա մ ե ո ռ, բ ա ց ի կ ի ր ա կ ի օ ռ ե ի ց:

Ա Ռ Ա Յ Ո Ց Ն Ե Ր Ը

Բ. Ա. Նախասարգեան—11—12 ժ. վերաբերում թեան, վերականգնող (թիֆլիս) և միջատաւ հիւանդ.

Կ. Մ. Ձիվալանի—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային:

Դ. Յ. Արտանովի—12—1 ժ. ակաւի, բէր, կա-

կոր զի և կրծքի:

Զ. Բ. Բաղրանտեանց—11—12 ժ. կանանց և երե-

խոյց հիւանդ.

Ա. Պ. Կարապետեանց—1—1/2 ժ. ներքին և երե-

խոյց:

Ե Ր Ե Կ Ո Ց Ն Ե Ր Ը

Բ. Յ. Արտանովի—6—7 ժ.

Բ. Ա. Նախասարգեան—7—8 ժ.

Վճար 50 կ. չարտնայող ձրի, համարողի (կօն-

սիլիումի) և օպերացիայի համար առանձին:

Օ. Տ. Առվալանի—առանց, ծաղկահատ և բժշ-

կական մարմնամարդ. դիմել 11—1 ժ.

Հիւանդանոցի վերանորոգ:

Բժշկապետ ՆԱԽԱՍԱՐԳԵԱՆ

Թիֆլիսի Ժողովարան

Հինգշաբթի, 1900 թ. օգոստոսի 10-ին, պ.պ. անդամների, կանդիդատների եւ նրանց ընտանիքների համար՝ ռուս դերասանների խումբը կը ներկայացնէ

„ՀԱՅՐԵՆԻՔ“

Դրամ 4 գործ, հեղ. Ջալալբեկով

Տեղերի գները 30 կ.—1 ր.: Հիւրերը վճարում են մուտքի համար 50 կ.:

Սկիզբը 8 1/2 ժ. երեկոյան: 1—2

ՀԱՐԿԱՒՈՐԵՆ

Երկու Ուսուցիչներ

որոնցից ամեն մէկը պէտք է դասաւանդէ երկու ուսումնարանում կրօն եւ հայոց լեզու: Մէկը ժող. լուս. միութեամբ, միւրսեան եւ երկուսեան ուսումնարանում կուենայ չարաթա-կան 30 դաս 700 ր. ուսձիւղով, իսկ միւսը՝ 24 դաս երկու միջառան զարդաներում՝ 550 ր. ուսձիւղով: Բայց ուսձիւղից ուսուցիչները ոչինչ չեն ստանայ: Պահանջվում է կարեւոր ցէնդ: Ծանկացողները պէտք է խնդր ուղարկեն իրանց ղեկավարների կամ նրանց վարչարարած պատճէնների հետ այս հասցեով: Городекому Старосте города Св. Креста Ставропольской губернии.

1—3

Թեհրանի հայոց ուսումնարանի համար հարկաւոր է

ԱԻԱԳ ՌՈՍՈՒՑԻՅԵ

24 դասով՝ հայերէնից, թուրքականից եւ ուրիշ առարկաներից եւ

ՌՈՍՈՒՑԶՈՒՀԻ.

երկուսի ուսձիւղ տարեկան 500 թուան (մօտ 1000 ր.): 1—3

ԱՐԴԱՆՈՒԶԻ ԾԵԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՀԱՄԱՐ

հարկաւոր են

ՌՈՍՈՒՑԻՅԵ և ՌՈՍՈՒՑԶՈՒՀԻ

(Գերագանի են ամուսիններ): Պայմանների համար դիմել՝ Михайловская, № 177, Կարապետ Ռուսականի:

9—10

ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

Ե Ր Կ Ո Ւ Ս Ե Ռ Ի Ս Ն Ձ Ա Ն Ց Հ Ա Մ Ա Ր

ՏԱՍԵԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Առևտրական Կուրսերի նպատակն է՝ մասնագիտական առևտրական կրթութիւն տալ երկու սեռի անձանց և պատրաստել գործնական ճանապարհով հմուտ հաշուապահներ: Առարողները ստանում են ա տ ո ե ս տ ա տ ն ե ր:

Աւանդելի առարկայք սրանք են՝ 1) Առևտրական Տնտեսութիւն, 2) Առևտրական Թուրքանութիւն, 3) Հաշուապահութիւն (պարզ, կրկնակի և բանկային), 4) Թուրքանութիւն համընթիւ վրա, 5) Առևտրական թղթակցութիւն, 6) Առևտրական և մուրհակի կա- նոնադրութիւն և 7) Գեղարդութիւն, վատ ձեռքի ուղղելը:

Ուսումը սկսվելու է սեպտեմբերի 15-ից: Հնդուներութիւնը սեպտեմբերի 1-ից, ա- մենայն օր, առաւօտեան 10-ից մինչև 11-ը, և երեկոյեան 4-ից մինչև 8 ժամը, կուրսեր հիմնողի քնակարանում, Սօրլախում, Ալեքսանդր Փրիգոնովի տանը № 9, Սերգիեվկայա և Լեբոնտովսկայա փողոցների անկիւնում: Մրադիրը և կանոնները կարելի է ստանալ ձրի ալ է ս եղը: Մօվիանովների բանկային գրասենակում և կուրսեր հիմնողի քնակա- րանում: Օտարաբաղադրացիք դիմում են՝ Тифлисъ, С. П. Мануэльянцу. (չ. չ.) 13—25

ТРЕБУЙТЕ ВЕЗДЬ

ШОКОЛАДЬ

СІУ

М. 9,730

7—52

ФАБР. С. СІУ И К. МОСКВА.

(2)

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱՐԱՀԱՄԵԱՆ

Հեղինակ «Չեռնարկի առևտրական և գործարանական հաշուապահութեան ՌՈՍՈՒՑԱՆՈՒՄ ԵՒ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ Է»

Երկու սեռի անձանց՝ 4 ամսվայ ընթացքում հաշուապահութիւն գործնականապէս, ե- րաշխաւորելով, և եղած զէպքերում լսանքն է առնում պաշտօնի առաջարկել:

ՊԱՐԱՊՈՒՆԻՐԻ ԱՌԱԿԱՆԵՆ ԵՆ

Ա) Կրկնակի իտալական հաշուապահութիւն ըստ ամենայն առևտրական ձիւղերի, հան- դերձ նախալին արդիւնաբերական և կերտիկի գործարանական հաշուետեսութեան:

Բ) Առևտրական թուրքանութիւն:

Գ) Առևտրական նախալագրութիւն:

Դ) Գեղարդութիւն և ամենամատ ձեռքերի ուղղելը:

Պարապտուները սկսվելու են 1900 թ. սեպտեմբերի 15-ից, ճաշից յետոյ, և պարբերաբար շարունակվելու են իւրաքանչիւր ՉՈՐՍ ամսից յետոյ, իսկ կրթակի օրերը լինելու են առանձին գործնական պարապտուներ:

Ցանկացողները թիւղ դիմեն գրաւոր կամ անձամբ 3 ժամից մինչև 6 ժամ երեկոյեան, Ս Օ Լ Օ Լ Ա Վ, Սերգիեվկայա փողոց, տուն Լիսիցեանի, № 20:

Վերջիշեալ հաշուապահութեան ձեռնարկը ծախվում է ԹԻՖԼԻՍՈՒՄ, հեղինակի մօտ, և Ռուսաստանի բոլոր յայտնի գրաւաճառանոցներում: Գինն է 3 ր. 50 կօպէկ: Օտա- րաբաղադրացիները գիրքը գնելու համար կարող են դիմել հեղինակին, առանց պօստի ծախս վճարելու: 15—30

ԱՄԵՆԱՅԱՅՏՆԻ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԻ

Ր Օ Ց Ե Ա Լ Ն Ե Ր

Գ Ա Շ Ն Ա Մ ՈՒՐ Ն Ե Ր

ՖԻՍ-ՀԱՐՄՈՆԻՈՒՄՆԵՐ, ՋՈՒԹԱԿՆԵՐ, ԿԻ- ԹԱՌՆԵՐ, ՅԼԷՅՏՆԵՐ, ԿԼԱՐՆԵՏՆԵՐ, ՉԱՑ- ՆԱՌԱՋԵՐ, ԼԱՐԵՐ, ԵՒ ԱՅԼՆ, ԵՒ ԱՅԼՆ:

Բոլոր տեսակ գործիքների համար դի- նը կարելի է վճարել մաս-մաս: Պ Ի Ե Ս Վ ՈՒՐ Ն Ե Ն ուղարկվում է ձրի:

ԵՐԱԺԵՏԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԵՒ ՉԱՑՆԱ- ԽԱՋԵՐԻ ԿՈՎԿԱՍԵԱՆ-ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ

Դ Է Պ Օ

Բ. Մ. ՄԻՐԻՄԱՆԵԱՆԻ

Մատակարար Կայսերական Երաժշտական Ընկերութեան

Музыкальное депо Б. М. Мириманяна, ТИФЛИСЬ. Дворцовая ул., д. Т. Д. 3. Банка. (չ. չ.) 13—20

ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՏԵԶ

ՌՈՍՈՒՄՆԱՐԱՆ ԵՒ ՊԱՆՍԻՕԵ

Ս. ՊԵՏՐՈՍԵԱՆԻ

Բ Ե Գ Ի ՈՒՄ

Ընդունվում են երեխաներ եւ պատրաստվում օրիորդաց եւ տղայոց փինադայի, ռէպրական դպրոցի եւ այլ ուսումնարանների համար:

Մանկական պարտէզի նպատակն է կրթել երեխաներին (4—7 տարեկ.) ֆրէզելեան սիս- տեմով: Ընդունվում են գրէնթօթիկ եւ կիսա- գրէնթօթիկ երեխաներ: Մանկական պարտէզի եւ ուսումնարանի մանրամասն ծրագիրը կա- րելի է ստանալ օգոստոսի 20-ից, Բազում 3—8

Լ ո յ ա տ ե ս ա լ

ԱՐԴԱՐ ԾԵՐՈՒՆԻ

Վ. ՀԻԳՕՅԻ

Բարգմ. Ա. Միլիարեան

Գինն է 15 կօպէկ:

Գիմել—Тифлисъ, контора Общества Издаия Ар- мянских книг (Лориселиновская № 11) կամ Тифлис (Russie) Société de la publication des livres arméniens. Ընկերութեան անդամ լինելու համար վճարում են տարեկան 6 րուրի եւ ստանում 8 րուր: Երբեք Ընկերութեան գրասենակում վճարվում են ընկերութեան գրքերը, ծանկացողներին ձրի ու- ղարկվում է գրացուցակ: 3—5

Въ непродолжительномъ времени поступать въ продажу новыя книги, соч. И. Я. Бронъ- фонъ-Бреннеръ

1] Курсъ коммерческой ариеметики, 2-о издание.

2] Самоучитель двойной бухгалтеріи и 3] Руководство по составленію отчетовъ.

Въ виду большаго требованія и ограни- ченнаго количества экземпляровъ, прини- маются заранѣе, до выхода, подписка у автора. Тифлисъ. Михайловская, 71.

3—20